

**Գյուղատնտեսական ծրագրերի մոնիտորինգի և վերլուծության վարչության
գյուղատնտեսական ծրագրերի մոնիտորինգի բաժնի առաջատար մասնագետ
(ծածկագիր՝ 30-3.2-151)**

Մասնակցում է գյուղատնտեսության ոլորտներում օրենսդրության կիրառման նկատմամբ մոնիտորինգի և պետական վերահսկողության ուղղությամբ կատարվող աշխատանքներին, գյուղատնտեսության բնագավառում իրավակիրառական պրակտիկայի մոնիտորինգի աշխատանքներին, գյուղատնտեսական պետական ծրագրերի ընթացիկ մոնիտորինգին, գյուղատնտեսության բնագավառին վերաբերող օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման պետական վերահսկողության աշխատանքներին, գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիտորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալները հավաքելու ու մշակելու նպատակով մեթոդական նյութերի և ուղեցույցների կազմման աշխատանքներին: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության բնագավառին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

Մրցույթը կկայանա 21.07.2016թ.՝ ժամը 10:00-ին, Նախարարության շենքում (ք. Երևան, Կառավարական տուն 3):

Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցութային մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցութային ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 12:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 29.06.2016թ.:

Մրցութային մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն 3, սենյակ N 114, հեռ. (011) 52-58-57):